


ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

ԵՐՐՈՐԴ ԶՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

Ե Վ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ



ԼՈՒՍՀՐԱՏ

197 FEB 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

338(07)

Ե-95

ս

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

ԵՐՐՈՐԴԻ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

Ե Կ

ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ԼՈՒՍԺՐԱՏ

ԵՐԵՎԱՆ

1940

7612

2590
41

Պատ. խմբագիր՝ Ա. Զուգրեյան
Տեխ. խմբագիր՝ Ն. Կարապետյան
Սրբագրիչ՝ Վ. Պողոսյան

Հանձնված է արտագրության 1940 թ. դեկտեմբերի 27-ին
Ստորագրված է տպագրության 1940 թ. դեկտեմբերի 31-ին
ՎՖ 1042, հրատ № 99, պատվ. № 326, Տիրաժ 200

Հուսիսարևմտի տպարան, Երևան, Տեղյան № 127

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Երրորդ հնգամյա պլանի հիմնական հարցերը աշխարհագրության դասավանդման ժամանակ օգտագործելը հույժ կարևորություն ներկայացնող խնդիր է։ Ուսուցիչն այդ խնդրին պետք է մոտենա ամենայն լրջությամբ ու սիրով, գիտակցի, որ նրանք աշխարհագրության ծրագրի անբաժանելի և կարևոր մասը պետք է կազմեն ամբողջ տարվա ընթացքում և ոչ թե կամպանիոն բնույթ կրեն։

Յ-րդ հնգամյակի նյութերը շունչ և թարմություն են տալիս աշխարհագրության դասերին, ոգեշնչելու են մեր աշակերտությանը մեր նվաճումների հոյակապությունը, բարձր աստիճանի վրա են դնելու սովետական հայրենասիրության զգացմունքը, սերը դեպի մեր սիրելի ընկեր Ստալինը։

Հենց այդ պատճառով էլ աշխարհագրության դասառուից մեծ հմտություն ու պատրաստություն է պահանջվում վերահիշյալ աշխատանքները վարելու, կազմակերպելու համար։ Նրանից պահանջվում է նախ՝ տիրապետել Յ-րդ հնգամյա պլանի հետ կապված աշխարհագրական նյութին և ապա՝ շնորքով ու հմտությամբ այդ բոլորը հաղորդել աշակերտությանը, դարձնել նրանց սեփականությունը։

Յ-րդ հնգամյակի այս նյութերը իրենց մի զգալի ու կարեւոր բաժնով պետք է մշակվեն դասարանում, հենց աշխարհագրության դասերի ընթացքում, իսկ մնացած նյութերը, կարևոր մանրամասնությունները, որպիսիք դասաժամերի սղության պատճառով հնարավոր չի լինի մշակել դասերի ընթացքում, պետք է տալ աշակերտությանը արտագրական պարապմունքների միջոցով, զրույց-դասախոսություններով։

Ինչպես ասացինք, ուսուցիչը պետք է լավ ծանոթ լինի նյութին, նա պետք է մանրամասն կոնսպեկտավորված ու մշակված ունենա ընկ. Մոլոտովի ղեկուցումը 18-րդ պարտ. համա-

գումարում և այդ առթիվ համագումարի ընդունած բանաձևը հետևի մամուլին, նրանում տրված ընթացիկ նորութիւններին: Նա պետք է տիրապետի քարտեզին և աշխարհագրական այն բոլոր վայրերի տեղագրութիւնը, որ կապված է 3-րդ հնգամյա պլանի հետ:

Ինչպես պետք է դասավանդել 3-րդ հնգամյա պլանի հետ կապված աշխարհագրական նյութերը:

Ինչպես միշտ, այս դեպքում էլ, պարզ է, որ հիմնական դերը պատկանում է Ուսուցչին: Տիրապետելով դասավանդելիք նյութերին, նա պետք է կենդանի ու գրավիչ դրույցով ապրեցնի աշակերտներին, բաց անի նրանց աչքերի առաջ սահղծագործական-շինարարական աշխատանքների այն հոյակապ պատկերը, որ նախատեսված է 3-րդ հնգամյա պլանով: Իր զրույցի, դասախոսութեան ընթացքում նա պետք է օգտագործի ընթացիկ նորութիւնները, կապված իր դասավանդելիք նյութի հետ, որպիսիք մեծ չափերով նա կգտնի մեր կենտրոնական և տեղական թերթերում և հատկապես «Գեոգրաֆիա վիտի», «ՄՍՍՄ» նա ստորյկե», «Նաշա ստրանա» և այլ ժուռնալներում: Մամուլը նրան կտա թե տեքստային նյութեր և թե մեծ չափերով աշխարհագրական նկարներ, քարտեզներ, սխեմաներ, որոնք նրա զրույցը կդարձնեն կենդանի, կոնկրետ և պատկերավոր: Ուսուցիչը կարող է այդ նկարներն ու քարտեզներն աշակերտների միջոցով մեծացրած դիրքով ցուցադրել դասարանում, կարող է ընթերցել նկարագրական հատվածներ, ինչպես և ցիտատներ բերել ընկեր Ստալինի աշխատութիւններին, ընկեր Մոլոտովի զեկուցումից և այդ առթիվ ընդունված բանաձևից:

Ուսուցչի զրույցը աշխարհագրութեան դասին, ինչպես գիտենք, միշտ պետք է շաղկապվի քարտեզի վրա ցույց տալու հետ: Այս կապակցութեամբ կարելի է հետաքրքիր աշխատանք կազմակերպել: Ուսուցիչը պետք է օգտագործի թե պատի մեծադիր քարտեզներ, թե աշակերտական ատլասներ և թե, մանավանդ, համը, ուրվագծային քարտեզները: Նա նախօրոք կարող է պատրաստել գնդասեղների վրա ամրացրած գունավոր դրոշակիկներ, որտեղ յուրաքանչյուր գույն, որպես պայմանական նշան, կարող է արտահայտել արդյունաբերութեան կամ գյուղատնտեսութեան որոշակի ճյուղ: Իսկ շարադրելիս, ուսուցիչը քարտեզի վրա աշխարհագրական վայրը ցույց տալու հետ մեկտեղ ամրացնում է համապատասխան գունավոր դրոշակիկը, իսկ աշակերտ-

ներն իրենց համը քարտեզների վրա գրում են այդ վայրի անունը և կողքին նշանակում արտադրութեան տվյալ ճյուղը՝ արտահայտող պայմանական նշանը: Այդ պայմանական նշանների բացատրութիւնը նրանք գրում են համը քարտեզների ցածի մասում: Այս տիպի աշխատանքը քարտեզը կդարձնի ավելի կենդանի և հնարավորութիւն կտա մի հայացքով ընդգրկելու 3-րդ հնգամյա պլանով նախատեսված ջինարարական օբեկտները աշխարհագրական տեղագրութիւնը: Հետագայում ուսուցիչը քարտեզի վրա ամրացրած նույն գույնի դրոշակիկները (արտադրութեան միատեսակ օբեկտները) միևնույն գույնի թելով կարող է միացնել իրար, իսկ աշակերտները իրենց համը քարտեզների վրա այդ նույնը անուշ են մատիտով որով շատ պատկերավոր ձևով կարելի է մի հայացքով ընդգրկել արտադրութեան միատեսակ օբեկտների աշխարհագրական տարածումը: Այս նույն աշխատանքը պատի քարտեզի և համը քարտեզի վրա կարելի է կատարել թե ըստ միութենական ռեսպուբլիկաների և թե ըստ առանձին տնտեսական շրջանների: Աշխատանքի այս ձևը նույնպես պատկերավոր ձևով աշակերտների աչքերի առաջ կամրոջացնի տվյալ տնտեսական շրջանն իր արտադրութեան օբեկտներով:

3-րդ հնգամյա պլանի հետ կապված աշխարհատնտեսական նյութը աշակերտների հիշողութեան մեջ ամրապնդելու համար կարելի է և օգտագործել աշխարհագրական տետրակներ: Այստեղ կարելի է գրել թե ըստ առանձին տնտեսական շրջանների 3-րդ հնգամյա պլանով նախատեսված աշխարհագրական օբեկտների անունները (արտադրութեան ճյուղերի անուններով ու համապատասխան թվական արտահայտութեամբ) և թե ըստ առանձին արտադրութեան ճյուղերի (հիգրոկլայմաներ—այսինչ վայրերում, տեքստիլ արդյունաբերութիւն—այսինչ վայրում և այլն):

Այս գրութեանները կարելի է արտադրել տալ մեծ թերթերի կամ պաշտպանների վրա և ցուցադրել թե դասարանում և թե դպրոցի միջանցքներում: Թվական տեղեկութիւններին կարելի է կազմել դիագրամներ:

Ընկեր Մոլոտովի զեկուցման և համապատասխան բանաձևի հիմնական դրույթները (օրինակ՝ «3-րդ հնգամյակը քիմիական հնգամյակ է», «տնտեսապես հասնել և անցնել Նվրոպայի ամենա-

զարգացած իմպերիալիստական երկրներից և ԱՄՆ-ից» և այլն) կարելի է գրել պլակատներում և փակցնել պատերին:

Ինչպես ասացինք, հկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխարհագրության դասաժամերը սահմանափակ են և ուսուցիչը կարող է հնարավորությունն չունենալ 3-րդ հնգամյակի հիմնական աշխարհագրական խնդիրները տալ դասերի ժամանակ, կարելի է կազմակերպել արտադասարանական զրույցներ, դասախոսություններ: Այս զրույցների, դասախոսությունների ընթացքում ևս պետք է օգտագործել քարտեզը, համապատասխան աշխարհագրական նյութեր ու սխեմաներ, որոնք ունենդիրներին հաղորդած նյութը կդարձնեն էլ ավելի պատկերավոր, կենդանի ու հետաքրքիր:

Ա.Վ. ՀՈՒՂՈՒՐՅԱՆ

ԵՐՐՈՐԴ ՇՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ¹⁾

ՍՍՌՄ Ժողովրդական տնտեսության երրորդ հնգամյա պլանի մասին ընկեր Մոլոտովի ղեկուցման առթիվ Համ Կ(Բ) 18-րդ համագումարի ընդունած բանաձևը և նրա ղեկուցումը համագումարում, հսկայական քաղաքական կարևորությունն ներկայացնող նյութեր են տալիս աշխարհագրության դասերի համար:

Ծրագրի հեղթական թեման անցնելու հետ կապակցված անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչը մանրամասնորեն ծանոթացնի սովորողներին ՍՍՌՄ Ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանի հետ:

Դա առավել ևս կարևոր է, որովհետև մեր սովորողների մեծ մասն աշխարհի մարդիկ են, որոնք ինքներն են ակտիվորեն մասնակցում սոցիալիզմի կառուցման ավարտման գործին:

Չկա և ոչ մի հսկած, որ նրանք կօգնեն աշխարհագրության դասախոսին պարզաբանելու մի շարք հարցեր կապված երրորդ հնգամյակի իրականացման հետ: Ահա թե ինչու աշխարհագրության բոլոր դասախոսներին անհրաժեշտ է, որ ամենից առաջ ինքները զինվեն մեր սոցիալիստական երկրի ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանի խորը գիտելիքներով:

Սկսենք աշխարհագրության դասավանդումից 7-րդ դասարանում: Դասընթացի 2-րդ բաժնում, որ նվիրված է ՍՍՌՄ տնտեսական աշխարհագրության համառոտ տեսությանը, համարյա չկա մի թեմա, որը կարիք չունենա լրացումների ընկեր Մոլոտովի ղեկուցման և բանաձևի կապակցությամբ: Նրանցում շատ նյութեր կան նաև 8-րդ դասարանի «Միութենական ուսուցումը և մարզերի աշխարհագրությունը» դասընթացի վերաբերյալ:

¹⁾ Կազմել է ՌՍՖՍՌ Լժկ-ի մեթոդիստ, աշխարհագրագետ Ի. Ռաբինովիչը:

Կոնկրետ ցույց տանք, թե բանաձևից և ընկեր Մոլոտովի զեկուցման հատկապես ինչ է անհրաժեշտ օգտագործել այդ դա-
սարանների աշխարհագրության դասերին: Սկսենք հիմնական,
սկզբունքային հարցերից:

1. ՆՅՈՒԹԵՐ «ՍՍՌՄ-ի ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ»-ը ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

7-րդ դասարանի դասընթացի համար հարուստ նյութեր
կան բանաձևում—ծրագրի 2-րդ բաժնի՝ «ՍՍՌՄ-ի տնտեսության
ընդհանուր բնութագրումը» թեմայի երեք կետերի վերաբերյալ:

- 1) «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության կառուցվածքը».
- 2) «ՍՍՌՄ համեմատումը խոշոր կապիտալիստական երկր-
ների հետ».

3) «Հիմնական տեղաշարժեր ՍՍՌՄ արտադրության գծով»:
Շարադրելով այս կետերից առաջինը—«ՍՍՌՄ ժողովրդա-
կան տնտեսության կառուցվածքը»—աշխարհագրության դասա-
տուն, հիմնվելով ընկեր Մոլոտովի զեկուցման վրա (տես 1-ին
բաժին), ամենից առաջ պետք է սովորողների ուշադրությունը
գարձնի այն բանի վրա, որ երկրորդ հնգամյա պլանը (1933—
1937 թ.) հաջողությամբ կատարելու հետևանքով «արտադրու-
թյան սոցիալիստական սիստեմը ամբողջականորեն դարձավ տի-
րապետող ՍՍՌՄ ողջ ժողովրդական տնտեսության մեջ».
երկ-
րորդ հնգամյակի գլխավոր և վճռական ճնշումն էր խնդիր—
ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակա-
ռուցման ավարտումը—հիմնականում կատարված է:

Երկրի էկոնոմիկայի վերակառուցման հետևանքով «հիմնա-
կանում իրականացված է կոմունիզմի առաջին ֆազը—սոցիա-
լիզմը» (ՍՏԱԼԻՆ):

Երկրի էկոնոմիկայի սոցիալիստական վերակառուցման հե-
տևանքով փոխվել է նաև սովետական հասարակության դասա-
կարգային կառուցվածքը: «Սոցիալիստական հասարակությունը
ՍՍՌՄ-ում ներկայումս կառուցված է երկու միմյանց բարեկամ
դասակարգերից—բանվորներից և սյուլադայներից, որոնց միջև,
ինչպես նաև այդ դասակարգերի ու խնդիրների միջև սահ-
մանները ջնջվում, աստիճանաբար անհետանում են»:

Ստախանովական շարժման հորը դարգացումը, կուլտուրայի
հսկայական աճը բոլոր սովետական ռեսպուբլիկաներում, լրտեսա-
կան-ֆեասարարական բանդաների ջախջախումը—այդ բոլորը

օգնեցին երկրորդ հնգամյա պլանի հաղթական կատարմանը: Եվ
ներկայումս «ՍՍՌՄ-ն երրորդ հնգամյակում մտել է զարգաց-
ման նոր շրջան, տնտեսական սոցիալիստական հասարակությամբ
կառուցման ավարտում և տեխնիկական սոցիալիզմից դեպի կո-
մունիզմ անցման օրոշում»: Այս հանգամանքը պարզաբանելու վրա
պետք է հատկապես մանրամասն կանգ առնել, այդ մասին պետք
է խոսել ամբողջ դասընթացի անցման ժամանակ, արտադասարա-
նային հատուկ զեկուցումների ժամանակ, դպրոցական պատի-
թերթի հոդվածներում և այլն:

Անցնելով ծրագրի վերջ հիշված կետերից II-ին—ՍՍՌՄ-ն
համեմատելով տեխնիկա-տնտեսական տեսակետից ամենազար-
գացած կապիտալիստական երկրների հետ,—դասատուն մանրադը-
նին կերպով, հավաքելով համապատասխան փաստեր, թվեր, պետք
է ցույց տա, որ զարգացման տեմպերի, արտադրության տեխ-
նիկայի գծով ՍՍՌՄ-ի արդյունաբերությունը ամբողջ աշխար-
հում բռնում է առաջին տեղը, բայց ընդհանրության մեկ հոգու
վրա հաշված արտադրության չափերի գծով, անցյալում մեր երկ-
րի տնտեսական հետաձուգության հետևանքով, մենք դեռ շատ
բան ունենք անելու: Ընկեր Մոլոտովը վիճակագրական մի շարք
սովյալներով խլուստրացիա է անում այդ դրությունը, որոնք և
կարելի է օգտագործել դասերին: Միաժամանակ դասատուն պետք
է ընդգծի, որ մենք մեր առաջ խնդիր ենք դնում մոտակա ժա-
մանակաշրջանում լիկվիդացիայի ենթարկել «ՍՍՌՄ արդյունա-
բերության արտադրանքի անբավարար չափերը» և «ապահովել
կոմունիզմի վերջնական հաղթանակը նրա պատմական ժողո-
թյան մեջ կապիտալիզմի հետ»:

«Ներկայումս,—ասվում է ընկ. Մոլոտովի զեկուցման առթիվ
ընդունված բանաձևում,—երբ ՍՍՌՄ-ն դարձել է սոցիալիստական
պետություն, հիմնականում ավարտել է ժողովրդական տնտեսու-
թյան տեխնիկական վերակառուցումը և արդյունաբերության ու
գյուղատնտեսության մեջ արտադրության տեխնիկայի մակար-
դակով կանգնած է եվրոպայի ամեն մի կապիտալիստական պե-
տությունից առաջ,—ներկայումս մենք կարող ենք և պարտա-
վոր ենք իրեն ամբողջ հասակով պրակտիկորեն գնելու և լուծե-
լու ՍՍՌՄ-ի հիմնական տնտեսական խնդիրը. ճնշումդես հույն-
պեո հասնել և անցնել սվետայի տնտեսագրագրած կապիտալի-
ստական երկրներից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից, վերջնա-
կանապես լուծել այդ խնդիրը մոտակա ժամանակաշրջանում»:

Դրա համար անհրաժեշտ են, մի կողմից, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական գինվածության հետագա վերելքը, մյուս կողմից, բանվորների, գյուղացիների և խնամելիքների աշխատանքի բարձր արտադրողականության ապահովումը:

Դասատուն ոչ պակաս արժեքավոր նյութ կարող է գտնել ընկ. Մոլոտովի ղեկավարման մեջ նաև ծրագրի վերը հիշված երրորդ կետի, ՍՍՌՄ տնտեսական աշխարհագրության կարևոր բաժիններից մեկի՝ «Հիմնական տեղաշարժեր ՍՍՌՄ արտադրության տեղադրման գծով» բաժնի լուսաբանման գծով:

Ինչպես հայտնի է, ընկեր Ստալինը Համկ(բ)Պ 16-րդ համագումարում Կենտրոնական Կոմիտեի հաշվետվության մեջ այդ պրոբլեմը—ՍՍՌՄ արդյունաբերության նիւթ օգտագործված պրոբլեմը—գրեց տնտեսական մյուս խնդիրների մեջ առաջին շարքում:

Ստալինով երրորդ հնգամյակում մեր արդյունաբերության տարածական տեղաշարժերի մասին, դասատուն պետք է ցույց տա, որ նրանք կապված են այն հիմնական սկզբունքների հետ, որոնցով առաջնորդվում է սովետական իշխանությունը, մեր սոցիալիստական արդյունաբերությունը ամբողջ երկրում տեղադրելու իր ձգտման մեջ:

Որո՞նք են այդ սկզբունքները: Նրանցից հատկապես կարևոր է հանդիսանում արդյունաբերությունը հումքի աղբյուրներին և սպառող շրջաններին մոտեցնելու սկզբունքը:

Համապատասխան դրան երրորդ հնգամյա պլանում առաջադրվում է՝

«Նախատեսվում է ՍՍՌՄ-ի արևելյան և Հեռավոր Արևելյան տարածքներում կապիտալ աշխատանքների և նոր ձևերով ձևավորվող ներքին շինարարության ծավալի ավելի արագ աճ: Ծարուհանկել ամեն կերպ զարգացնել այդ շրջաններում մետալուրգիական բազան, որի համար դոմենյան վառարանների ամբողջ քանակի երեք-քառորդը երրորդ հնգամյակում կառուցել երկրի արևելյան շրջաններում (ղեկավարման առթիվ բանաձևի 3-րդ բաժին, կետ 3 գ.):»

ՍՍՌՄ արևելքում պետք է ստեղծել տեքստիլ արդյունաբերության նոր խոշոր արտադրական բազա, ուր կվերամշակվի միջինասիական բամբակը: Ինչ վերաբերվում է Հեռավոր Արևելքին, ապա այնտեղ նախատեսվում է «քարածխի արդյունահանման տեմպերի արագ զարգացում, ինչպես և ցեմենտինը, այն չափով, որն ամբողջովին ապահովի նրա պահանջը»:

Այդպիսով, մեր արդյունաբերության այն աշխարհագրական տեղաշարժը դեպի Արևելք, որը կատարվել է Ստալինյան առաջին երկու հնգամյակների ընթացքում, կշարունակվի նաև երրորդ հնգամյակի ընթացքում:

Աշխարհագրության դասատուն ընկ. Մոլոտովի ղեկավարման մեջ կգտնի ցուցումներ և այն մասին, որ արդյունաբերության մյուս աշխարհագրական տեղաշարժը, որ նախատեսված է հզել արդեն նախորդ երկու հնգամյակներում—սեյլաուսիս—կշարունակվի նույնպես երրորդ հնգամյակի ընթացքում: Այսպես, հյուսիսային շրջաններում արագորեն կզարգանա անտառային արդյունաբերությունը (տես բաժին 3-րդ, կետ 4, ը.), դործի կղզի Կանդալակայի ալյումինի գործարանը, Հյուսիսային Նիկելի (Մոնչեգորսկ) և Կոնդոպոգայի դիլյուբրգաթղթային կոմբինատը: Նախատեսվում է ավարտել Մուրմանսկի նավաշինարանների կառուցումը:

Հնգամյակի վերջին Հյուսիսի կենդանացմանը՝ մեծապես կօժանդակե Հյուսիսային ծովային ուղու նորմալ գործող ջրային մագիստրալը, որը կապահովի Հեռավոր Արևելքի հետ պլանաչափ կապը (բաժին 2-րդ, կետ 17, ա.):

Դասատուն պետք է սովորողների ուշադրությունը դարձնի այն բանի վրա, որ ՍՍՌՄ արդյունաբերության տեղադրման հիշատակված աշխարհագրական տեղաշարժերը, որոնք հակառակն նշանակություն ունեն մեր երկրում արտադրական ուժերի ճիշտ տեղաբաշխման տեսակետից, միաժամանակ ապահովում են Արևելքի և Հյուսիսի անցյալում հետամնաց ազգային ռեսպուբլիկաների և մարզերի տնտեսական ու կուլտուրական հետագա վերելքը:

Վերլուծելով ՍՍՌՄ արտադրության տեղաբաշխման հարցերը, անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը դարձնել իրենց մարդի, երկրամասի, շրջանի էկոնոմիկայի վրա: Այդպիսի աշխատանքը կարելի է տանել նաև դասերից դուրս. կազմակերպել ցանկացողների համար հատուկ խմբակ, ղեկավարման, էքսկուրսիաներ:

Բնութագրելով ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունը, դասատուն բաց չպետք է թողնի այն հանգամանքը, որ անհրաժեշտ է սովորողներին ցույց տալ այն չափազանց կարևոր խնդիրը, որը առաջին անգամ մեծ պարզությունով արտահայտված է քաղաքականության մեջ—երրորդ հնգամյակի ընթացքում ՍՍՌՄ

տնտեսական հիմնական շրջաններում կապվեցալից սննծոլթյուն զարգացման խնդիրը (բաժին 3-րդ, կետ 3, ա.)։ Այդ շրջաններում պետք է կազմակերպվի վառելիքի հանույթը, տեղական շինարարական նյութերի արտադրությունը, թեթև և սննդի արդյունաբերության մասնաճյուղի առարկաների արտադրությունը այն չափով, որը ապահովի այդ շրջանների պահանջը։

Երկրորդ շրջաններում կոմպլեքսային տնտեսության ստեղծումը ոչ միայն կապված է արդյունաբերությունը հումքի աղբյուրներից և սպառողական շրջաններից մոտեցնելու խնդրի հետ, այլևս հնարավորություն է տալիս բաժանական հավասարաչափ կերպով տեղաբաշխել արդյունաբերությունը երկրի ողջ տերիտորիայում։

Քրա համար անցյալում տնտեսական հետամնաց մի շարք շրջաններում նախատեսված տնտեսության բազմակողմանիորեն զարգացման հետ միասին ընդգծվում է, որ ահապակցում է պահանջի պատշաճ հսկողություն ՀամԿ(Բ)Պ, Կենտկոմի և ՍՍՌՄ Ժողովուրդների որոշման կատարման վրա—Մոսկվայում և Լիւնինգրադում նոր ձեռնարկությունների կառուցումն առգեղնատեման, ինչպես և այդ որոշումը տարածել Կիևի, Սարևոյի, Ռոստովի (Դոնի-վրա), Գորկու, Սվերդլովսկի վրա, որոնցում այսուհետև արգելել նոր ձեռնարկությունների շինարարությունը։

Այսպիսով ՍՍՌՄ արդյունաբերության սոցիալիստական տեղաբաշխումը ոչ մի ընդհանուր բան հունի արդյունաբերության այն տարբերային տեղաբաշխման հետ, որը կարողատեղան Ռուսաստանում, որտեղ համարյա թե ամբողջ խոշոր արդյունաբերությունը կենտրոնացած էր միայն կենտրոնում, այսպես կոչված «բուն Ռուսաստանում»։

Այդ բոլորի կապակցությամբ արժե հիշատակել մի հրաշալի հատված «Անտի-Դյուրինգ»-ից. «Միայն այն հասարակությունը, որն ընդունակ է ներդաշնակորեն շարժման մեջ գտնվել արտադրական ուժերը, համաձայն միասնական—ընդհանուր պլանի, կարող է նրանց այնպես կազմակերպել, որ հնարավոր կլինի ամբողջ երկրում հավասարաչափ բաշխել խոշոր արտադրությունը, ամբողջովին համապատասխան իր սեփական զարգացմանն ու պահպանմանը և արտադրության այլ էլեմենտների զարգացմանը»։*)

*) Ֆ. ԷնԴեԼՍ—ԱՆՏԻ-ԴԵՅՈՒՐԻՆԴ

Վերջապես հիմնական տնտեսական շրջաններում կոմպլեքսային տնտեսության ստեղծումը կապված է նաև մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության շահերի հետ։

Այսպիսով, երրորդ հնգամյա պլանի նյութերի հիման վրա բնութագրելով ՍՍՌՄ արտադրության տեղաբաշխման գլխավոր տեղաշարժերը, դասատուն անցնում է 7-րդ դասարանի ծրագրի հաջորդ թեմային—«ՍՍՌՄ արդյունաբերության աշխարհագրություն»։

2. ՆՏՈՒԹԵՐ «ՍՍՌՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բնութագրելով ՍՍՌՄ արդյունաբերությունը, դասատուն ամենից առաջ ընկ. Մոլոտովի ղեկուցման հիման վրա պետք է ցույց տա, որ երկրի արտադրական-տեխնիկական ապարատը արմատապես վերանորոգվել է։ Հենց այստեղ էլ կարելի է բերել համապատասխան տվյալներ։ Այնուհետև հաքկավոր է ցույց տալ, որ առանձնապես արագ տեմպերով աճեց ծանր արդյունաբերությունը։

Հարկավոր է ընդգծել, որ երրորդ հնգամյակում նախատեսված է մեքենաշինարարության և ամբողջ ծանր արդյունաբերության հետագա զարգացումը։ Պետք է նաև հիշատակել, որ ՍՍՌՄ արդյունաբերական արտադրանքի աճի տարեկան միջին տեմպը երրորդ հնգամյակում սահմանվում է 14% ընդ որում նախատեսված է առադրությամբ միջոցների առադրությամբ տարեկան միջին աճ—15,7%, իսկ սպառողական առարկաների արտադրության գծով—11,5%։

Վերը հիշված թեմայի մյուս ենթաթեմաների շարադրման ժամանակ դասատուն պետք է հատկապես կանգ առնի հետևյալ խնդիրների վրա, որոնք առաջ են քաշված ՍՍՌՄ Ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանով։

«ԵՆԵՐԳԵՏԻԿԱ»—ԵՆԹԱԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարկավոր է նշել, որ պլանով նախատեսված է՝

1) Ստեղծել տեղական քարածխի հանույթի նոր բաղանիք, երկրի բոլոր այն շրջաններում, որտեղ կա անգամ ոչ մեծ հանքավայր։

2) 1942 թվին քարծրացնել քարածխի հանույթը մինչև 243 միլ. տ. (190%—1937 թ. համեմատությամբ)։

3) Վոլգայի և Ուրալի միջև ընկած շրջանում ստեղծել նոր նավթային բազա—«Երկրորդ Բաքու»:

4) Կառուցել նավթամուղների ցանց հատկապես ՍՍՌՄ արևելյան շրջաններում:

5) Ավելացնել նավթի հանույթը—հասցնելով այն մինչև 54 մլն տ. (177⁰/₀—1937 թ. համեմատությամբ):

6. Ընդարձակել տորֆային արդյունաբերությունը այնպիսի մարզերում, ինչպիսին է Իվանովի մարզը:

7) Ընդարձակել բոլոր տեսակի վառելանյութերի գազիֆիկացիան և քարածխի ստորերկրյա գազիֆիկացիան,—այն արդյունաբերության ինքնուրույն ճյուղ դարձնելու նպատակով (Դոնբասում, Մերձմոսկովյան ավազանում և ՍՍՌՄ արևելքում):

8) Կարծր վառելանյութի հեղուկացման հիման վրա ստեղծել արհեստական հեղուկ վառելանյութերի արդյունաբերություն (առաջին հերթին արևելքում), ինչպես և գազից կարծր վառելանյութի սինթեզ:

9) Ավելացնել էլեկտրոկայանների ընդհանուր հզորությունը հնգամյակի ընթացքում 2,1 անգամ:

10) Զերմային էլեկտրոկայանների շինարարության գծով անցնել փոքր և միջակ էլեկտրոկայանների շինարարությանը, որոնք ունեն 25 հազար կիլովատ և ավելի պակաս. հենց այստեղ էլ անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը դարձնել այն բանի վրա, որ ընկեր Մոլոտովի ղեկավարման մեջ դատարարում է «խոշոր էլեկտրոկայանների շինարարությամբ համընդհանրվելը ի հաշիվ փոքր և միջակ էլեկտրոկայանների, որպես այսպիսի և ֆաբակարժ ժողովրդական տնտեսության համար»:

11) Ավելացնել էլեկտրոէներգիայի արտադրությունը 1940 թվին մինչև 75 միլիարդ կվտ. ժ. (206⁰/₀ 1937 թ. համեմատությ.):

«ՍԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ» ԵՆԹԱԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այն կապակցությամբ, որ երրորդ հնգամյակը պիտք է լինի հատուկ (специальный) պողպատների հնգամյակ, առանց որոնց հնարավոր չէ մեքենաշինության զարգացումը, երրորդ հնգամյա պլանով նախատեսվում է 2 անգամ ավելացնել որակյալ պրոկատի արտադրությունը և շատ ավելի մեծ չափերով ավելացնել հատուկ պողպատների արտադրությունը: Ընդամենը մեծ ուշադրություն է դարձվելու Միության արևելյան շրջաններում սև մետալուրգիայի զարգացման վրա:

Այսպես, պլանում նախատեսված է.

1) Հեռավոր Արևելքում նոր մետալուրգիական բազայի ստեղծումը, լրիվ մետալուրգիական ցիկլով, տեղում մեքենաշինարարության բոլոր պահանջներն ապահովելու համար:

2) Հնգամյակի ընթացքում Միության արևելյան շրջանների տեսակարար կշիռը բարձրացնել չուգունի ձուլման գծով, հասցնելով այն երկրի ընդհանուր ձուլվածքի 28-ից մինչև 35⁰/₀-ին:

«ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ» ԵՆԹԱԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գունավոր մետալուրգիայի ասպարիզում նախատեսված է ավելացնել գունավոր մետաղների արտադրությունը այն չափով, որ ապահովվի երկրի արագ աճող ժողովրդական տնտեսության և պաշտպանության պահանջները (1842 թվին սև պղինձի ձուլումը պետք է աճի 2,8 անգամ, ալյումինի ձուլումը ոչ պակաս քան 4 անգամ—1937 թվի համեմատությամբ և պետք է ապահովվի կապարի, ցինկի, նիկելի, անագի, մագնիսի, վոլֆրամի, մոլիբդենի և սուրմայի արտադրության բարձր տեմպերը):

«ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ» ԵՆԹԱԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այն կապակցությամբ, որ ժողովրդական տնտեսությունը տեխնիկական զինելու գործում առաջավոր դերը պատկանում է մեքենաշինությանը, նախատեսված է՝

1) մեքենաշինության արտադրանքն ավելացնել 3 անգամ (զգալիորեն բարձր արդյունաբերության ընդհանուր աճից):

2) Ապահովել բոլոր տեսակի դադահանների արտադրությունը, բարձրացնելով բարձր արտադրողականություն ունեցող և հատուկ դադահանների, առաձնապես ավտոմատ և կիսավտոմատ դադահանների արտադրության տեսակարար կշիռը:

3) Հաղթահարել էներգետիկ մեքենաշինության համեմատաբար հեռ մնալը (տուրբինների, լոկոմոբիլների, դիզելների և այլն) ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության հարաճուն պահանջներից, մասնավորապես տիրապետել հզոր հիդրոտուրբինների արտադրությունը կույրիչի հիդրոհանգույցի համար:

4) Հաղթահարել հեռ մնալը շինարարական մեքենաների և մեխանիզմների արտադրության մեջ, ինչպես և շինարարական գործիքների արտադրության մեջ:

5) Արագացնել բարդ ապարատուրայի և քիմիական արդյունաբերության համար սարքավորման արտադրությունն ու ամբողջությամբ ապահովել նրա հզոր աճը:

6) Տիրապետել նոր, տեխնիկական կատարելագործված մանվածքային և դործվածքային մեքենաների արագընթաց տե- սակներին արտադրությունը:

7) Ծովային և օվկիանոսային տրանսպորտն ապահովել ժա- մանակակից նավերի բոլոր տեսակներով:

8) Լայնացնել ավտոմատիկ և տեխնիկական ղեկավարման ապարատության արտադրությունը:

«ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ» ԵՆԹԱԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երրորդ հնգամյակը—Քիմիայի հնգամյակ է:

Քիմիական արդյունաբերությունը պետք է դառնա արդյու- նաբերության առաջավոր ճյուղերից մեկը, որպեսզի ամբողջովին բավարարի ժողովրդական տնտեսության և երկրի պաշտպանու- թյան պահանջները:

Այս կապակցությամբ երրորդ հնգամյակում նախատեսնը- վում է՝

1) Քիմիական արդյունաբերության արտադրանքը ավե- լացնել 2,4 անգամ, այսինքն ղգալի չափով ավելի բարձր՝ ամ- բողջ արդյունաբերության աճի համեմատությամբ:

2) Նավթի երկրորդական մթերքների օգտագործման, կաու- չուկի, կոկսի և բնական դազերի արտադրության հիման վրա ստեղծել օրգանական սինթեզի նոր ճյուղեր (սինթետիկ սպիրտի, քացախային թթվուտի արտադրություն և այլն):

«ԱՆՏԱՌԱՄՇԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ» ԵՆԹԱԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անտառային արդյունաբերության ասպարեզում պլանով նախատեսված ևն հետևյալ խնդիրները՝

1) Գազօգններատորների և շոգեշարժիչների բազայի հի- ման վրա իրականացնել անտառանյութերի մթերքան բոլոր ար- տադրական պրոցեսների կոմպլեքսային մեխանիզացիան:

2) Ըստ ամենայնի դարգացնել թղթի և անտառաքիմիական արդյունաբերությունը:

ՍՍՌՄ Եվրոպական մասի հյուսիսի, հյուսիս-արևմուտքի շրջաններում և Ուրալում անտառային արդյունաբերության դարգացման կապակցությամբ դադարեցնել Սիբիրից, ՍՍՌՄ Եվ- րոպական մասը անտառանյութերի փոխադրումը:

3. ՆՅՈՒԹԵՐ«ՍՍՌՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒ- ԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս թեմայի շարադրման ժամանակ դասատուն պետք է նշի երրորդ հնգամյակի հետևյալ խնդիրները:

1) 1942 թվին ամբողջ գյուղատնտեսության մեջ բարձրաց- նել արտադրանքի աճը 1937 թվի համեմատությամբ 52%-ով, մասնավորապես—հացահատիկային կուլտուրայի ուղղությամբ ապահովել տարեկան բերքահավաքը մինչև 8 միլիարդ փուլ, բամբակի—հումքի հավաքը—մինչև 32,9 միլիոն ցենտներ, շա- քարի ճակնդեղ—մինչև 282 միլ. ցենտներ, վուշ—թել—մինչև 8,5 միլիոն ցենտներ:

Անասնապահության ասպարեզում—ավելացնել ձիերի քա- նակը 35%, խոշոր եղջյուրավոր անասուններինը 40%, խոզե- րինը 100%, ոչխարների և այծերի քանակը 110% (անասուն- ների գլխաքանակի ավելացումը և անասնապահության ապ- րանքային արտադրանքի աճը պետք է ամբողջովին լուծի անասնապահության պրոբլեմը ՍՍՌՄ-ում):

2) Գյուղատնտեսության ասպարեզում իրագործել 1500 ՄՏԿ-ների շինարարությունը ինչպես նորերի, այնպես էլ հին ՄՏԿ-ները փոքրացնելու հաշվին:

3) Բուկացիայի և մեկտրացիայի ուղղությամբ սկսած բո- լոր խոշոր իրեգացիոն և չորացման աշխատանքն ավարտել.— Վախշ, Կոխիդան, Նեվինոմիսսկի ջրանցքը, Մուրղաբի օաղիսը: Սկսել Զավոլոչեյի ոռոգչական սիստեմի շինարարությունը:

Ամրացնել երաշտային շրջանների արտադրական-տեխնիկա- կան բազան:

4) Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի, Կիևի, Մարկովի, ինչ- պես և Դոնբասի, Կուզբասի, Գորկու արդյունաբերական կենտ- րոնների, Հեռավոր Արևելքի քաղաքների և մյուս բոլոր խոշոր քաղաքների շրջակայքում ստեղծել կարտոֆելա-բանջարային և անասնապահական բազաներ, որոնք ամբողջովին ապահովեն այդ կենտրոնները բանջարեղենով, կարտոֆելով և ղգալի չափով էլ կաթով ու մսով: (Այս կետի վրա հարկավոր է սովորողներին առանձնատուկ ուշադրություն դարձնել: Ընկեր Ստալինը դեռ Համ Կ(բ)Պ 17-րդ համագումարում նշել է, որ «Մեր մարդերի հին բաժանումը արդյունաբերականի և ագրարայինի—արդեն ապրել է իր շրջանը», դրա համար էլ «ամեն մի մարդ պետք է ձեռնարկի իր մոտ իր սեփական գյուղատնտեսական բազայի



շինարարութիւնը, եթե նա չի ուղղում ընկնել գծվարին կացութեան մեջ»):

5) Ապահովել հացահատիկային և մյուս կուլտուրաների ցանքները բացառապես բարձր տեսակի և հատընտիր լավ սերմերով, արմատացնել կոլխոզներում և սովխոզներում ճիշտ ցանքաշրջանառութիւնները:

6) Ավարտել գյուղատնտեսական աշխատանքների կոմպլեքսային մեխանիզացիան և լայնորեն արմատավորել առաջավոր ագրոտեխնիկան:

IV. ՆՅՈՒԹԵՐ «ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՑԱԼ

Տրանսպորտի ասպարիզում նախատեսվում է.

1) կառուցել նոր երկաթուղիներ և շահագործման հանձնել 11 հազար կիլոմետր երկաթուղի.

2) էլեկտրիֆիկացիայի ենթարկել 1840 կիլոմետր երկաթուղային ճանապարհ, առաջին հեթին լեռնային ճանապարհները, այն գծամասերը, որոնք ունեն ապրանքաշրջանառութեան լարված չափեր, ինչպես և այն խողոր հանգույցները, որոնք ունեն ինտենսիվ մերձքաղաքային շարժում.

3) ձեռք առնել լայն միջոցառումներ գոյութիւն ունեցող ջրային ճանապարհների վերակառուցման և կարգի բերելու ուղղությամբ, հատկապես՝ ա) վերակառուցել Աստրախան—Գորկի—Ռիբինսկ—Մոսկվա ջրային ուղին այնպես, որպեսզի երրորդ հնգամյակի վերջին Աստրախանից մինչև Մոսկվա ստեղծված լինի խորը ջրային տրանզիտային ճանապարհ—ապահովելով բոլոր վայրերում ջրի խորութիւնը ոչ պակաս 2,6 մետրից.

բ) ծավալել Վոլգա—Բալթյան ջրային ճանապարհի վերակառուցումը. գ) երրորդ հնգամյակի վերջում Հյուսիսային ծովային ճանապարհը վերածել նորմալ գործող ջրային մագիստրալի, որը կապահովի պրանաչափ կապը Հեռավոր Արևելքի հետ:

4. Կառուցել և վերակառուցել 210 հազար կիլոմետր ավտոմոբիլային ճանապարհ:

5. Բարձրացնել օդային մագիստրալների տեխնիկական սարքավորումը:

V. ՆՅՈՒԹԵՐ ՑՐԴԻ ԴԱՍԱՐԱՆԻ «ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ԴԱՍԸՆԹԱՅԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՑԱԼ

Ցրդ դասարանում պարապմունքներն անցկացնելիս, դասատուն պետք է խմբավորի ընկեր Մոլոտովի դեկլացման և նրա առթիվ ընդունված բանաձևի առանձին տվյալներն ըստ առանձին շրջանների:

ՈՁ ՍԵՎԱՅՈՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Երրորդ հնգամյակի վերջում ոչ սեահողային կենտրոնի դերը, որպես մեքենաշինարարութեան շրջանի, ավելի ևս ուժեղանում է:

Այստեղ պետք է ավարտվեն ավտոգործարանի շինարարութիւնը Մոսկվայում, ծանր դադգյահաշինարարութեան երեք գործարան, ավտոգործարան և ֆրեզերային դադգյահների գործարան—Գորկիում: Կալուգայի շրջանում պետք է կառուցվի տուրբինների գործարան:

Ոչ սեահողային կենտրոնում կաճի նաև սննդի արդյունաբերութիւնը: Կավարտվեն Մոսկվայում ձկան և իվանովոյի մսի կոմբինատների շինարարութիւնը:

Կարևոր է նշել նույնպես, որ երրորդ հնգամյակի վերջում այս շրջանը զգալիորեն կազատվի հեռավոր տեղերից վառելիքի ներմուծումից, մի քանի խոշորագույն էլեկտրակայաններ գործի դնելու հետևանքով: Այսպես՝ գործի կդրվեն նոր հիդրոէլեկտրակայաններ—Ուզլիչի և Ռիբինսկի—և կավարտվի նախատեսված ջերմէլեկտրոէլեկտրակայանի կառուցումը Իվանովոյում: Կսկսվի Կալուգայի հիդրոէլեկտրոէլեկտրակայանի կառուցումը—Օկա գետի վրա:

ՍԵՎԱՅՈՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՌՍՖՍՌ այս մասում պետք է ուժեղանա շաքարի արդյունաբերութեան դերը. այստեղ գործի կդրվեն շաքարի երեք գործարաններ (2-ը Վորոնեժի մարզում, 1-ը Կուրսկի մարզում), Կուրսկում կառուցվելու է տեքստիլ մեքենաների գործարան:

ՌՍՖՍՌ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՈՒՏՔԸ

Այս շրջանը կդառնա գունավոր մետալուրգիայի շրջան—Մուրմանսկի մարզում նեֆելինների (հումք ալյումինի արդյուն

նաբերութեան համար) և նիկելի պաշարների հայտաբերման կապակցութեամբ:

Այսպէս, բացի արդեն Վոլոդյատրոյում եղած ալյումինի գործարանից, այստեղ գործի կղբվի նաև Կանդալակչայի ալյումինի գործարանը և Հյուսիսային նիկելի գործարանը: Բացի դրանից, շնորհիվ այստեղի առատ անտառների՝ կշարունակի աճել անտառային արդյունաբերութիւնը. գործի կղբվի Կոնգոպոգայի ցելլուլոզա-թղթային կոմբինատը: Մեծ հաջողութիւնների կհասնի այս շրջանը նաև արդյունաբերութիւնը սեփական էներգետիկ ռեսուրսներով ապահովելու ուղղութեամբ: Գործի կղբվեն երկու հիդրոէլեկտրակայաններ՝ Սվիր 2-ը, Նիվա--3-ը և ջերմէլեկտրակայան Լենինգրադում:

Պ Ո Վ Ո Ւ Ժ Յ Ե

Այստեղ կուժեղանա մեքենաշինարարութեան նշանակութիւնը (հատկապէս տրանսպորտայինը), որն արդեն սկսել է ստեղծվել Ստալինյան՝ առաջին երկու հնգամյակների ընթացքում: Դա կարտահայտվի Սարատովում գնդակավոր առանցքակալների գործարանի շինարարութեան ավարտմամբ:

Թաթարական ռեսպուբլիկայում (Կազանում), այն կապակցութեամբ, որ այստեղ հնուց կենդանական հումքը վերամշակման է ենթարկւում, կստեղծվի արհեստական կաշվի գործարան: Մարիական ռեսպուբլիկայի հարուստ անտառների բազայի հիման վրա գործի կղբվի ցելլուլոզային կոմբինատ:

Ապա նախատեսված է խոշոր միջոցառումներ՝ լիկվիդացիայի ենթարկելու Պոլոժյեում էներգետիկ ռեսուրսների պակասը, որը մինչև այժմ արգելակել է այստեղ արդյունաբերութեան զարգացմանը: Այդ միջոցառումներին են վերաբերւում. 1) Կուլբիշևի 3, 4 միլ. կվս. ընդհանուր հզորութեամբ, աշխարհի մեծագույն 2 էլեկտրակայանների կառուցման շինարարութեան ծավալումը, էլեկտրակայաններ, որոնք ոչ միայն էլեկտրոէներգիա կմատակարարեն Պոլոժյեի արդյունաբերութեանը, այլև կլուծեն Զավոլժյեի երաշտին ենթակա հողերի ոռոգման պրոբլեմը և զգալիորեն կաւազնեն նավագնացութեանը Վոլգա և Կամա գետերով: 2) Վոլգայի և Ուրալի միջև ընկած շրջանում հզոր նավթային բազայի, «Երկրորդ Բաքու»-ի ստեղծումը:

Այստեղ տնտեսական զարգացումը կընթանա արդեն առաջին երկու հնգամյակներում սկսած մեքենաշինարարութեան և անդի արդյունաբերութեան ուղղութեամբ:

Այսպէս, Նովոչերկասկում կկառուցվեն տուրբինների և կաթնաշակառուցման գործարաններ, որոնք միմյանց հետ սերտ կապ կունենան, իսկ Նալչիկում գործի կղբվի մսի կոմբինատը:

Կավարավի Նեխինոմիսկի ռոտգէան ջրանցքի շինարարութիւնը, որը չափազանց կարևոր միջոցառում է հանդիսանում Հյուսիսային Կովկասի (արևելյան) երաշտային մասի գյուղատնտեսութեան համար:

Ո Ւ Ր Ա Լ

Ուրալում կշարունակվի ոչ միայն մետալուրգիայի հետագա զարգացումը, որն այդ շրջանում հանդիսանում է ծանր ինդուստրիայի հնագույն ճյուղը, այլև մեքենաշինարարութիւնը, որն այստեղ ստեղծվել է միայն Սովետական իշխանութեան օրոք՝ նպատակ ունենալով արդյունաբերութիւնը մոպեցնել հումքի աղբյուրներին: Սև մետալուրգիայի ասպարիզում նախատեսված է ավարտել Մագնիտոգորսկի կոմբինատի, Նիժնի-Տապիլի գործարանի շինարարութիւնը, կսկսվի նոր մետալուրգիական գործարանների շինարարութիւնը Հարավային Ուրալում (Սալիլովոյի և Բաիալի հանքերում):

Գունավոր մետալուրգիայի ասպարիզում-կավարտվեն Սրեչնեկուրսկի և Բլավինսկի պղնձաձուլական կոմբինատների շինարարութիւնը և գործի կղբվի Ուրալյան ալյումինի կոմբինատը (Կամենսկում): Ինչ վերաբերւում է մեքենաշինարարութեանը, ապա նախատեսված է Սվերդլովսկի շրջանում կառուցել տուրբինների գործարան:

Երրորդ հնգամյակում Հյուսիսային Ուրալում կստեղծվի նրա համար նոր արդյունաբերական ճյուղ—ցելլուլոզա-թղթային արդյունաբերութիւնը: Գործի կղբվեն Սոլիկամսկի և Կամսկի ցելլուլոզա-թղթային կոմբինատները: Ուժեղ չափով կաճեն նաև էներգետիկ ռեսուրսները: Կյուրացվեն Ուրալի քարածխի հանույթի նոր շրջանները, գործի կղբվեն ՏՅՑ-ը Չելյաբինսկում, ջերմային էլեկտրակայանը Օրսկում, ձեռնարկվում է Վերխնեկամսկի հիդրոկայանի կառուցումը, որը սերտ կապված է Մեծ Վոլգայի պրոբլեմի իրականացման հետ:

Երբորդ հնգամյակում այստեղ լայնորեն կծավալվի սոցիալ-
լիստական շինարարությունը:

Արևելյան Սիբիրում կստեղծվի խոշոր մետալուրգիական
բազա, որը հսկայական նշանակություն ունի երկրի տերիտորի-
այ պաշտպանության համար (Հեռավոր Արևելքը մեր ամենա-
վտանգված թշնամու—Ճապոնիայի հետ մերձակա լինելու կապակ-
ցությունը): Արևելյան Սիբիրում կկառուցվեն նոր մետալուր-
գիական գործարաններ: Արևմտյան Սիբիրում (Ալտայում) կաճի
գունավոր մետալուրգիան. կծավալվի անագի և ցինկի գործարան-
ների շինարարությունը: Մեծ թափ կստանա մեքենաշինարարու-
թյունը: Սիբիրում և Հեռավոր Արևելքում կծավալվի արանսպոր-
տային մեքենաշինության նոր գործարանների շինարարությունը,
հատկապես ավտոհավաքման և բեռնատար մեքենաների գոր-
ծարանների շինարարությունը: Արևմտյան Սիբիրում պետք է
կառուցվի նաև տեքստիլ մեքենաների գործարան: Ծանր ինդուստ-
րիայի զարգացման հետ միասին կզարգանա նաև թեթև, սննդի
և անտառային արդյունաբերությունները: Արևմտյան Սիբիրում
կծավալվի նոր տեքստիլ ֆաբրիկաների շինարարությունը. Արևե-
լյան Սիբիրում գործի կդրվի ցելլուլոզային կոմբինատը (Կրաս-
նոյարսկում), մսի կոմբինատներ (Ուլան-Ուդեում, Իրկուտսկում):
Հեռավոր Արևելքում նախատեսված է ավարտել ձկնարդյունա-
բերության կոմբինատների (Կոմսոմոլսկում և Պարարովսկում)
և մսի կոմբինատի (Պարարովսկում) շինարարությունը:

Արդյունաբերության զարգացման համապատասխան ձեռք
կառնվեն միջոցներ էներգետիկ ռեսուրսների ավելացման ուղղու-
թյամբ: Այսպես, նախատեսված է յուրացնել Արևելյան Սիբի-
րի և Հեռավոր Արևելքի քարածխային նոր շրջանները. նախա-
տեսված է էլեկտրոկայանների շինարարության ավարտումը և
գործարկումը Կրասնոյարսկում ու Պարարովսկում:

ՈՒԿՐԱԻՆԱ

Մետալուրգիայի ասպարիզում—կավարտվեն Զապորոժսկա-
յի և Ագովստալի շինարարությունները:

Ինչ վերաբերում է մեքենաշինարարությանը, ապա նա
նույնպես կստանա իր հետագա զարգացումը: Կիևում կավարտ-
վի ավտոմատ դալգահների գործարանի շինարարությունը:

Թեթև արդյունաբերության ասպարիզում—նախատեսված
է գործի դնել մահուդի կոմբինատը Կիևում, իսկ սննդի արդյու-
նաբերության ասպարիզում—մսի կոմբինատներ Դնեպրոպետրով-
սկում և Վորոշիլովգրադում:

Կավելացվեն նաև էներգետիկ ռեսուրսները. այդ նպատա-
կով նախադրված է. 1) գործի դնել Չերմային էլեկտրոկայանի
Կիևում, Նիկոլաևում և Նեավետայում, 2) յուրացնել քարածխի
հանույթի նոր շրջանները և 3) ծավալել երկրաբանական աշխա-
տանքներ նավթային նոր շրջաններում:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՑԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԸ

Այստեղ նախատեսված է որոշ չափով լայնացնել տեքստիլ
արդյունաբերությունը: Այն ձեռնարկություններին, որոնք ար-
դեն հիմքեր են դրել տեքստիլ կենտրոն ստեղծելու համար Անդր-
կովկասում, որպես հույս է արտադրող շրջանի, կմիանա նաև Լե-
նինականի մանվածքային ֆաբրիկան:

Գործի կդրվեն Բանաքեռի և Սուխոմիլի հիդրոէլեկտրոկա-
յանները, կսկսվի Մինդեշաուրյան նոր հիդրոկայանի շինարարու-
թյունը: Կավարտվի Կոլխիդայի ձահիճների չորացումը:

ՂԱՋԱՍՍԱՆ

Ղաղախտանը կվերածվի գունավոր մետալուրգիայի խոշոր
բազայի: Երբորդ հնգամյա պլանով նախատեսված է ավարտել
Մերձբալխաշյան պղնձաձուլական կոմբինատի շինարարու-
թյունը և ծավալել փեղկաղանի պղնձաձուլական կոմբինատի շինարա-
րությունը: Մեծ զարգացման կհասնի նաև թեթև արդյունաբե-
րությունը—կկառուցվեն մի շարք տեքստիլ ֆաբրիկաներ, հումքի
(բամբակ, բուրդ) աղբյուրներին մոտ գտնվելու կապակցությամբ:
Նախատեսված է Չերմային էլեկտրոկայանի շինարարու-
թյունը և հիդրոէլեկտրոկայանի շինարարությունը—
Ուստ-Կամենոգորսկում:

ՄԻՋՆԻ ԱՍԻԱՅԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԸ

Այստեղ տեղի կունենա թեթև արդյունաբերության (գործի
կդրվի Տաջենդի բամբակեղենի կոմբինատի երկրորդ հերթը),
ծանր արդյունաբերության (պղնձաձուլական կոմբինատի շինա-
րարությունը) և սննդարդյունաբերության (գործի կդրվեն մսի
կոմբինատներ—Ալշաբադում և Ստալինաբադում, շաքարի գոր-
ծարան Ալմա-Աթայում) հետագա զարգացումը:

Հիմնվելով ընկ. Մոլոտովի զեկուցման և այդ զեկուցման առթիվ Համ Կ(Բ)Պ XVIII համագումարի ընդունած բանաձևի վրա, դասատուն պետք է տա այն վիթխարի շինարարության փայլուն պատկերը, որը ծավալվելու է երրորդ հնգամյակի ընթացքում մեր երկրի լայնատարած տերիտորիայի վրա: Բնութագրելով այդ, դասատուն պետք է ընդգծի, որտեղ միայն այդ հնարավոր է, թե ինչպես խելացիորեն և պլանաչափ է տեղադրաշինվում հնգամյակով նախատեսված ձեռնարկությունները, նշի այն սկզբունքները, որոնց հիման վրա ստեղծվում են նրանք:

Ընկ. Մոլոտովի զեկուցման այն նյութերը, որոնք վերաբերում են այս ուսումնական տարում արդեն անցած թեմաներին, դասատուն պետք է սովորողներին հաղորդի հատուկ զրույցում: Ավելի խորացրած կերպով դասատուն պետք է կանգ առնի և ծանոթացնի սովորողներին այն հեռանկարների հետ, որոնք բացվում են ՍՍՌՄ Ժողտնտեսության զարգացման ընթացիկ հնգամյա պլանի իրագործմամբ իրենց հայրենի երկրի տնտեսության զարգացման առաջ:

VI. ԵՐՐՈՐԴ ՀՆԴԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՈՒՄԸ
5, 6, 9 ԵՎ 10 ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՍԵՐԻՆ

Եզրափակման մեջ անհրաժեշտ է նշել, որ ընկ. Մոլոտովի զեկուցումը կարևոր է և պետք է օգտագործել աշխարհագրության դասերին ոչ միայն VII և VIII դասարաններում, այլ նաև ֆույսից բոլոր դասարաններում: Ամենից առաջ կանգ առնենք այն մասին, թե ընկ. Մոլոտովի զեկուցումից որ նյութը պետք է օգտագործել 5-րդ դասարանի աշխարհագրության դասերին: Ծրագրի կարևոր կետերից մեկի—«Երկու աշխարհ—երկու սխտեմ» և «Աշխարհի քաղաքական բաժանումը» թեմայի վերաբերյալ ընկ. Մոլոտովի զեկուցման մեջ կան շատ արժեքավոր արտահայտություններ և փճակազրական սովյալներ, որոնք հնարավորություն կտան սովորողներին հասկանալ, թե ինչպես և ինչի շնորհիվ է, որ սոցիալիզմն անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում արտադրողական ուժերի զարգացման համար, քան կապիտալիզմը: «Այն ժամանակ, երբ կապիտալիստական երկրներն արդյունաբերությունը 1929 թ. վերջին սկսված ծանր տնտեսական ճգնաժամից հետո 1937 թվին հասավ հազիվ 102%-ի—

1929 թ. համեմատությամբ,—ասված է ընկ. Մոլոտովի զեկուցման առթիվ ընդունված բանաձևի մեջ,—իսկ 1937 թ. երկրորդ կեսից, նոր ճգնաժամի հարվածների տակ նորից գլորվեց ցած,— ՍՍՌՄ-ի արդյունաբերությունը 1937 թ. հասավ 428%-ի 1929 թվի մակարդակի համեմատ»: 1938 թ. ՍՍՌՄ ամբողջ արդյունաբերության արտադրանքը հասավ 477%-ի 1929 թ. մակարդակի նկատմամբ, այն ժամանակ, երբ կապիտալիզմի երկրներում 1938 թ. արդյունաբերության արտադրանքը ընկավ մինչև 90%-ի 1929 թվի մակարդակի նկատմամբ:

«Ի հակադրություն կապիտալիզմի, որտեղ, առանձին երկրներն արդյունաբերության զարգացման մեծ անհամաչափության պայմաններում, վերջին տասնամյակի ընթացքում ընդհանրապես աճ չի եղել, և ընդհակառակը, արդյունաբերական արտադրանքի նկատելի պակասում է տեղի ունեցել,—ՍՍՌՄ-ում մենք ունենք արդյունաբերության անշեղ և արագ վերելք, տարեց-տարի արդյունաբերական արտադրանքի անմիջապես քաճառ քաճառ»:

Երևան հանելով «Օվկիանոսները և ծովերը որպես հաղորդակցության ճանապարհներ» (VI թեմա) կետի բովանդակությունը, դասատուն պետք է պատմի, որ երրորդ հնգամյակի վերջում Հյուսիսային ծովային ճանապարհը կվերածվի նորմալ գործող ջրային մագիստրալի, որը կապահովի կապը Հեռավոր Արևելքի հետ, և նկարագրի, թե ընդհանրապես ի՞նչ նշանակություն ունի այդ մեր երկրի համար:

«Գետերը հաղորդակցության ճանապարհներ» (VI թեմա) կետի մասին խոսելիս, դասատուն ընկ. Մոլոտովի զեկուցման հիման վրա պետք է ցույց տա, որ երրորդ հնգամյակի ընթացքում կանցկացվեն լայն միջոցառումներ գոյություն ունեցող ջրային ճանապարհների վերակառուցման և կարգավորման ուղղությամբ, ճանապարհների վերակառուցման և կարգավորման ուղղությամբ, կվերակառուցվի Աստրախան—Գորկի—Ռեբելնսկ—Մոսկվա ճանապարհն այն հաշվով, որպեսզի երրորդ հնգամյակի վերջում Աստրախանից Մոսկվա ստեղծվի խորը ջրային տրանզիտային ճանապարհ, ապահովելով բոլոր վայրերում ոչ պակաս 2,6 մետր խորություն: Անհրաժեշտ է պատմել նաև Վոլգա—Բալթիկ ջրային ճանապարհի վերակառուցման մասին:

Կանգ առնելով նույն թեմայի «Գետերն էներգիայի աղբյուրներ» կետի վրա, դասատուն ՍՍՌՄ-ում արդեն գործող խորագույն էլեկտրակայանների հետ միասին պետք է նշի նաև այն էլեկտրակայանները, որոնք կառուցվելու են երրորդ հնգա-

մյակի ընթացքում: Այդ շարքում ամենից առաջ պետք է թվել «Մեծ Վոլգա»-ի պրոբլեմի իրականացման հետ կապվածները, հատկապես՝ Կուլբեշևի երկու էլեկտրոկայանները, որոնք իրենցից ներկայացնելու են «աշխարհում խոշորագույն կառուցումներ», Կալուզայի (Օկա գետի վրա), Վերխնեկամսկի, Ուզլիչի և Ռիբինսկի էլեկտրոկայանները:

Վերջապես «Լանդշաֆտի փոփոխումը մարդու տնտեսական դրժուկությունների անհրաժեշտության ներքո» կետի շարադրման ժամանակ պետք է ցույց տրվի, որ կլիմայական աննպաստ պայմանների դեմ պայքարելու խնդրի հետ կապակցված (պայքար հարաշարի կամ չափազանց խոնավության դեմ), որը լայնորեն կծավալվի երրորդ հնգամյակում, — խիստ կերպով կփոփոխվեն նաև Զավոլժյեի մի քանի շրջանների, Կոլխիդայի և այլ վայրերի լանդշաֆտները: Ուժեղ չափով կփոփոխվի Կուլբեշևի, Ռիբինսկի և Ուզլիչի էլեկտրոկայանների շինարարության վայրերի լանդշաֆտը, որտեղ երևան կգան նոր «ծովեր»:

Ինչ վերաբերվում է 6, 7 և 10 դասարանների աշխարհագրության դասընթացին, որ նվիրված է կապիտալիստական աշխարհի ուսումնասիրությանը, ապա ընկ. Մոլոտովի ղեկուցումը հսկայական մատերիալ է տալիս համեմատելու կապիտալիստական առանձին երկրները ՄՍՌՄ-ի հետ — տնտեսական, սոցիալ-քաղաքական և կուլտուրական տեսակետից:

Եզրամիակման մեջ անհրաժեշտ է նշել, որ աշխարհագրության դասերին, բացի ընկ. Մոլոտովի ղեկուցման և ընդունված բանաձևի նյութերի օգտագործումից, դասատուի առաջ, կապված այն մեծ հետաքրքրության հետ, որ կա ամբողջ երկրում դեպի պարտիայի 18-րդ համագումարի նյութերը, ՄՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության երրորդ հնգամյա պլանին նվիրված հատուկ երեկոներ, ղեկուցումներ կազմակերպելու հսկայական հնարավորություններ են բացվում:

Անվիճելի է, որ երրորդ հնգամյա պլանի մասսայականացումը աշխարհագրության դասերին, դասատուի ձեռքին պետք է դառնա հզոր միջոց թեորիան պրակտիկայի հետ կապելու, սովորողներին գիտելիքներով զինելու, գիտելիքներ, որոնք պետք են նրանց կոմունիզմի գործի համար մղվող հետագա պայքարում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0203916

4160 50 4.

8976

28.725

732